Քարագլուխ

Բնակչության թիվը՝ 860

Վարդենիսի լեռնաշղթայի հարավային լաջին երեք կողմից բլուրներով շրջապատված գողտրիկ մի վայրում է գտնվում նախկին Եղեգնաձորի շրջանի, այժմ Վայոց ձորի մարզի Քարագլուխ գյուղը: Գյուղում և նրա շրջապատում պահպանվել են V - XVll դարերի գյուղատեղիներ, 1230թ. կառուցվել է ս. Մամասի վանքը, 13-րդ դարից գործում է ս. Պողոս եկեղեցին, մատուռներ 7-14-րդ դարերից պահպանված խաչքարերով, գերեզմանոց, առանձին խաչքարերը, որոնցից մեկն էլ հենց գյուղ մուտք գործողները կարող են տեսնել, որը զանգվածեղ Քարագլխից անսովոր հակված՝ ասես քարեղեն խոնարհումով ողջունում է գյուղի հյուրերին: Բնակիչների նախնիները 1828 թվականին գաղթել են Խոյ և Սալմաստ գավառներից: Գուղի վարչական տարածքը 2744,7 հա է, գտնվում է մարզկենտրոնից 17 կմ հեռավորության վրա, ծովի մակարդակից բարձր է 1650 մետր:

Գյուղի տնտեսությունները 170 -ն են, 940 բնակիչներով:

Գյուղն ունի միջնակարգ դպրոց, նախակրթարան , գրադարան, մշակույթի տուն, կապի բաժանմունք և բուժկետ:

Համայնքը զբաղվում է անասնապահությամբ և այգեգործությամբ: Գյուղի հյուրընկալ աշխատասեր բնակիչներն իրենց շրջապատող բնության նման պարզ են, զուլալ ու զգայուն,գեղեցիկ ու մարդկային հույզերի նկատմամբ: